

Շ Ո Ւ Շ Ա Ն Ի Կ

Աշնանային ցուրտ ու խոնաւ առաւօտ է. երկինքը պատած է մշուշով. մանր անձրեւ է մաղւում: Քաղաքը նոր է զարթնել: Կտուրներից թափուող ջուրը թիթեղեայ խողովակների մէջ թեթեւ աղմուկ հանելով փողոցները լցնում է մի ընդհանուր մոմոտցով: Ծառերը նայում են վհատ ու տխուր. նրանց թորշոմած ու դեղնած տերևները, անձրևի կաթիլների հետ մէկիկ-մէկիկ ընկնում են ցած, ցիւխի ու տիղմի մէջ:

Տխուր է քաղաքը, մռայլ են և մարդիկ. նրանք դժգոհ դէմքերով անցնում են սառը և թաց մայթերով: Թարմ և ուրախ են միայն դէպի դպրոցը շտապող մանուկները. բնութեան թախծոտ տեսքը, ամպը, թուխպը, անձրևը, ցուրտն ու խոնաւը, տերեւաթափ ծառը նրանց չի վշտացնում, նրանց մատաղ սիրտը չի ալեկոծում, բոլորը նրանց համար սիրելի են, բոլորին նրանք սիրում են և ուրախ, զուարթ, թեւերի տակ մի-մի կապոց, գրքերի պայուսակ, շտապում են:

«Ահա դարձեալ մի կէս ժամ ու բոլորը կանցնին», մտածում է կօշկակարի տասերկու տարեկան աղջիկ, Շուշանիկը՝ որը իր սովորութեան համաձայն կանգնել էր բակում, դէպի փողոցը նայող դռների մէջ: Նա անընդհատ նայում է անցուդարձ անող իր անծանօթ բարեկամներին ու հայեացքով հետևում է նրանց մինչև փողոցի միւս ծայրը. նա բոլորին գիտէ, բոլորին էլ ճանաչում է: «Այժմ, ձեռք-ձեռքի տուած, երկու քոյրը կանցնին. ահա կաղլիկ աղջիկը, ահա փոքրիկ տղան, իր մեծ պայուսակով. այժմ սիրուն աղջիկն է գնում. ահա երեք փոքրիկները իրանց աղախնի հետ. հիմայ կանցնի սեփական կառքը...» Նա բոլորին էլ նախանձում է, մանաւանդ վերջինին: «Որքան բաղդաւոր են», բացազանչում է Շուշանիկը ամեն անգամ, երբ անցնում է այդ կառքը և այդ ժամին թւում է, որ ձիաները կայծակից էլ արագ են թռչում, կառապանը հպարտ նըստած, հագիւ է նրանց պահում:

— Շուշան, հեշտաեւին նայիր, լսում է նա մօր ձայնը.

խնդրոյն վազում մի քանի ածուխ է աւելացնում ու նորից դառնում է իր տեղը:

—Շուշան, լսում է նորից մօր ձայնը.—բնկը աւելի:

Նա, աւելը ձեռքին, բակը սրբում է. բայց աչքը փողոցից չի հեռացնում. նոյն տանը կեցող, վերի յարկի երկու քոյրերը դեռ չեն անցել. հաճախ նրանք սանդուխներից իջնում են, իր մօտով պիտի անցնեն, իր հետ պիտի խօսեն. նա այդ գիտէ:

—Բարի լոյս քեզ, Շուշանիկ, բնկն ես աւելում—ուրախ բարեւում է նրան տան տիրոջ աղջիկ Հեղինէն, որը վերաքննութիւնից յետոյ փոխուել է վեցերորդը:

—Այո, ցածր ու քնքոյշ ձայնով պատասխանում է Շուշանիկը ու քայլում է նրանց յետևից մինչև փողոցը:

«Ախ Աստուած, կը լինի մի օր էլ ես սրանց պէս ուսումնարան գնամ. առաւօտները վեր կենամ շատ վաղ, կօշիկներս սրբեմ, մազերս սանրեմ, ես էլ նրանց պէս մաքուր, գեղեցիկ շորեր հագնեմ, սև գոգնոցով, սիրուն ուսնոցով. կապեմ գրքերս, առնեմ թեխ տակ, ուրախ ու զուարթ վազեմ ուսումնարան: Այնտեղ դեռ ոչ ոք չի լինիլ. բակը աւելեմ, դռները, պատուհանները սրբեմ, ուսուցչիս հեշտանուն էլ փայլեցնեմ: Նա ինձ շատ սիրէ. ասէ Շուշանիկ, ան այս գիրքը կարդա, այս նկարներով գիրքը քոնը լինի... Երբ կը դառնամ տուն, տան գործն էլ կ'անեմ, մայրիկիս կ'օգնեմ, լուացք կ'անեմ. օ՛ շատ կ'աշխատեմ ափսոս չի մայրիկս. նա շատ է չարչարում»: Նա սիրում էր երկնք մտածել, տարուել վառ ցնորքներով, քաղցր ու անուշ պատրանքով:

Անցնում էին օրեր: Մի առաւօտ վերի յարկի քոյրերը զարմացան: Շուշանիկը դուրսը չէր, նրանց չբարևեց. երկրորդ օրն էլ չկար նա: Տրտմեցին, մի մեծ բանից զրկուած էին համարում իրանց: «Այսօր էլ մենք վատ թուանշան կը ստանանք» նախազուշակում էին նրանք: Եւ երբ դասից վերադարձան տուն, անմիջապէս իջան ներքնայարկը և առաջին անգամ մրտան Շուշանիկի ծնողների բնակարանը:

Շուշանիկը հիւանդ է. նա պառկած է թախտի մի ծայրին. այտերը կարմրել են, աչքերը աւելի են վառոււմ, շրթունքները չորացել են, սիրտը արագ-արագ բաբախում է, իսկ շնչառութիւնը տաք է, ինչպէս կրակ:

—Բարի լոյս քեզ, Շուշանիկ, տկձր ես:

—Այո, զարմացած պատասխանեց նա:

—Ի՞նչու տկարացար:

—Չգիտեմ:

—Մըսել է, երէկ առաւօտ, այն ցրտերին, հօ տեսաք:

դուրսը կանգնած էր: Մըսել է, շատ է մըսել, միջամտեց մայրը, խնդրելով օրիորդներին նստել: Նրանք տեղափոխվեցին հիւանդի մօտ. մի վայրկեան տիրեց լռութիւն, ապա կարեկցաբար նայելով հիւանդին, սկսեց մեծ քոյրը:

— Իհարկէ կը մըսի, տաք հագուստ չունի, վերարկու չունի, նոյնիսկ մի շալ չունի ուսերին:

— Ի՞նչպէս չէ, բամբաղից ֆուֆայկայ ունի, չի հագնում, ի՞նչ անեմ. ամեն առաւօտ դուրսն է, ձեզ է նայում, ձեզ շատ է սիրում, այ թէ ինչո՞ւ է մըսում: Ամեն օր լաց է լինում ձերնձ ուսումնարան տարէք, ես էլ եմ ուզում սովորե՞լ բայց մեզ պէս խեղճին ուսումնարանն ո՞վ կը տայ. մենք ո՞վ, ուսումնարանն ո՞վ:

— Շուշանիկը լաւ աղջիկ է, ափսոս է, որ առանց ուսումնի մնայ. իհարկէ պէտք է ուսումնարան տաք, ուղիղ է ասում:

— Մայրիկս ի՞նչ անի, մենք խեղճ ենք, եթէ հարուստ լինէինք, ես էլ ձեզ հետ ուսումնարան կը գնայի, այնտեղ լաւ է, չէ՞, շատ գրքեր կան:

— Այո, մի ամբողջ սենեակ լիքը:

— Եւ այդ բոլորը դուք կարդում էք, կարող էք տուն էլ բերել, այնպէս չէ. ուսումնարանն ի՞նչ լաւ է: Ես որ վեր կենամ... ես... ես էլ կը գամ, կը տանէք, հա՛, ինձ էլ կը տանէք:

— Անպատճառ, անպատճառ, կը տանենք. դու այնքան լաւ աղջիկ ես, Շուշանիկ, դու այնքան բարի ես:

— Հայրիկս չի թողնիլ. ես ամեն երեկոյ խանութի կօշիկները սրբում եմ. մայրս էլ մեղք է. օ նա այնչափ գործ ունի. նա լուացք է անում. ես էլ տան գործն եմ շինում, երեխաներին եմ պահում. այդ դուք չգիտէք. հայրս բարկացոտ է... բայց ուսումնարանը ի՞նչ լաւ է. ասում էք ամբողջ սենեակը գիրք է, այսպէս, մինչև առաստաղը լիքը, օ ի՞նչ շատ է, կարդում էք. խաղալիք էլ կայ, տիկի՞ն էլ կայ... Բայց ես ոչինչ ունեմ, ոչինչ: Որ ես ուսումնարան գնամ, մայրիկ, կը թողնեմ:

— Կը թողնեմ, միայն լաւացիր, շուտով լաւացիր:

— Ես լաւացել եմ, այ, տես, լաւ եմ, ձեռքերիս մէջ չի այլուում. այստեղ մի փոքր ծակում է, ձեռքդ բեր, այ, այս տեղ, կռանս տակ, կարծես դանակով են ծակում. քիչ է ցաւում, շատ չի ցաւում: Առաւօտը վեր կը կենամ, դուրսը կը սպասեմ ձեզ, դուք ինձ կասէք. «բարի լոյս քեզ Շուշանիկ, տկամր ես» ես էլ կասեմ,—հչ, այժմ առողջ եմ:

— Ո՛չ, այդպէս չի լինիլ. մենք առաւօտը կը գանք քեզ մօտ ու կը տանենք քեզ ուսումնարան:

— Դ՛հա, ինձ ուսումնարանն. հչ, խաբում էք, ես գիտեմ...

բայց չէք խաբիր, այնպէս չէ. գիտեմ, բայց ես ձեզանից մի բան պիտի խնդրեմ... այնպէս սրտով ուզում եմ. գրքերը բռնել թեկիս տակ ու ման գալ։ Առաւօտները երբ դուք ուսումնարան էք գնում, ես էլ այնպէս գնամ, մի փոքր հեռու ու նորից գամ մեր տունը, բայց գրքեր չունիմ... Այստեղ, ուսումնարանի այն մեծ սենեակից, ինձ համար մի մեծ գիրք բերեցէք. ես էլի ձեզ յետ կը տամ. միայն մի օր, դարձեալ տարէք. հիմ, կըտամք, կը բերէք։

— Զէնց այս ըտպէին քեզ համար գրքեր կը բերենք, որ քան ուզում ես. մենք շատ ունենք, պատասխանեց Հեղինէն, իսկ փոքր քոյրը վաղեց իրանց տունը, ու միքանի վայրկեանից յետոյ բերեց Շուշանիկի ուզած գրքերը. և դառնալով հիւանդին ասաց.

— Ահա այս բոլորը քոնն է. քեզ ենք ընծայում։

Հիւանդը աչքերին չի հաւատում. նա մերթ մօրն է նաւում, մերթ քոյրերին, թւում է նրան, որ ահա նրանցից մէկն ումէկը գրքերը պիտի նորից առնի։ Երկու ձեռքով ամուր բռնած, նա դիտում է, նոյնիսկ չէ վստահանում թերթի։

— Շուշանիկ, ապա բաց, այդ կարմիր կողով գրքի մէջ պատկերներ կան, ասաց Հեղինէն, սիրալիւր նայելով նրան։

— Ուղիղ էք ասում, այս գրքերը ի՞նձ կը տամք. չէք տանի։

— Այդ բոլորը քոնն է. մենք քեզ դեռ ուրիշ գրքեր էլ պիտի տանք։

— Շնորհակալ եմ. սա ինձ բաւական է. ես որ լաւանամ, էլի ձեզ յետ կը տամ, հայրիկը ինձ համար կառնի. նստեցէք. ի՞նչու վեր կացար։

— Թող հայրիկդ էլ առնի, բայց մենք քեզ էլի շատ գրքեր կը տանք. նրա համար, որ դու շատ ես սիրում։

Շուշանիկը ոչինչ չէ պատասխանում. նայում է գրքերին. թերթում է. նայում է պատկերներին, գրքերը նորից դարսում է, դնում է թեկի տակ. նորից վերցնում։

«Ա՛խ ինչ լաւ է այնպէս... բայց ես վատանում եմ». նրա աչքերը մթնում են, մայրը ջուր է տալիս, օրիորդները քացախ են քսում ճակատին. նա փոքր ինչ ուշքի է գալիս, գրքերը հաւաքում է, դնում թեկի տակ և իր սիրալիւր հայեացքը նորից ուղղում օրիորդներին. նրա վառ, հրեշտակափայլ աչքերը, անթարթ նայում են, իր երախտագիտութիւնն է ուզում արտայայտել իր ամբողջ էութեամբ. և այդ վայրկեանին նա ճրքան գեղեցիկ, ճրքան չքնաղ է. նա ցանկանում է իր ամբողջ սիրտը

— Բաց անել նրանց առաջ. ուզում է խօսիլ, բայց չի կարողանում... Յանկարծ նա լաց է լինում.

— Ձգիտեմ, այնպես լազս գալիս է, հեկեկանքը զսպելով, պատասխանում է նա օրիորդներին և նորից բաց անելով կարմիր կողով գիրքը, կանգ է առնում մի պատկերի վրայ:— Այս փոքրիկ աղջիկը պահում է իր կոյր պապին. այնպես չէ:

— Այո, դա մուրացկանութիւն է անում և կերակրում է իր ծերունի և կոյր պապին:

— Խեղճ աղջիկ, նա ուսումնարան գնացել է:

— Այո, ուսումնարան եղել է. երբ ծնողներից զրկուել է, դուրս է եկել և երկար տարիներ իր պապին պահել է:

— Այդ բոլորը այստեղ գրուած է, այնպես չէ:

— Այո, դա փոքրիկ Հեղիկի պատմութիւնն է:

— Ինչ լաւ աղջիկ է. իսկ ես ուզում եմ խեղճ մայրիկիս թողնել և ուսումնարան գնալ. նա երկար նայում է պատկերներին, թւում է նրան, որ ինքը իրաւունք չունի ուսումնարան գնալու, քանի որ իր ծնողները խեղճ են:

— Մայրիկ, դառնում է նա մօրը, օրիորդների դուրս գալուց յետոյ, Հեղինէի հայրը շատ փող ունի:

— Այո, նրա հայրը վաճառական է:

— Ինչո՞ւ հայրիկս էլ վաճառական չէ... այն ժամանակ ես էլ ուսումնարան կը գնայի և եթէ մեր բակումը մի կօշկակարի աղջիկ ապրէր, ես նրան շատ կը սիրէի, հետը խաղ կ'անէի, մեր տունը կը տանէի, ուսումնարանն էլ ցոյց կը տայի, խաղալիքներ կը տայի... Ձեռքերս էլի այրւում են, ինչ վատ եմ... հայրիկս ինչո՞ւ չեկաւ:

— Դեռ թնդանօթը չեն արձակել, երեւի շուտով կը գայ, թ'նչ պիտի անես:

— Այնպէ՞ս ուզում եմ, որ շուտով գայ: Կ'ասեմ գիրք ունեմ... ես ուսումնարան... բայց չի թողնել... մայրիկ, կօշկակարի աղջկանը ուսումնարան կը թողնեն:

— Իհարկէ կը թողնեն:

— Ո՛չ, կ'ասենք քու հայրիկդ կօշկակար է. դու էլ գնա, լուացք արա, տուն սրբի, բակ աւլի՛ր, գիտե՞ս այդպէս է. ուզում ես Հեղինէին հարցրու. նա այդ բոլորը գիտէ, բայց չի ասում, ա՛յ, վաղը տօն է, նա ինքն ասաց, մեզ խօտ պիտի գայ. ուզում ես հարցրու: Կարծես ուզում եմ քնել, թէ ինչ ինքս էլ չգիտեմ:

— Եթէ քունդ տանում է, քնի՛ր, ես էլ լուացքը պարզաջրեմ, ա՛յ, այս բոպէիս կը գամ:

— Գնա, մայրիկ, ես լաւ եմ, ասաց Շուշանիկը. բայց նա

լաւ չէ. տաքութիւնը սաստկանում է, գլուխը ցաւում, ականջները խռում են. հայեացքը պղտորւում է, վերմակը ծանրացել ճնշում է նրան. թւում է որ սենեակը մեծանում է, պատերն էլ են շարժւում ու ինքը տարւում է, աւելի շուտ ընկնում է, ահատել, հեռու, կանանչ բլրակի վրայ. ահա պիտի հասնի ու տանջանքից ազատուի. բայց նա գլորւում է անդունդ, ահռելի խորխորատներ, և օգնութիւն է կանչում... Զառանցում է, անհասկանալի բառերի մէջ մերթ ընդ մերթ լսում է, գիրք... ու սուսնարան... կօշկակարի աղջիկ... Նա չիմացաւ ինչ պատահեց իր հետ գիշերը: Լուսաբացին կարծես փոքր ինչ լաւ էր զգում իրան: Երբ աչքերը բաց արաւ, կարմիր կազմով գիրքը ընկած էր իր կողքին, իսկոյն առաւ դրեց թեւ տակ: Մայրը աթոռի վրայ հագուատով քնած էր, հայրը աշխատանքի չէր գնացել, լամպարը դեռ վառւում էր: Նա ուշադրութիւնը լարեց, հարկանի տանը պատի ժամացոյցը խփում էր. համարեց, ժամի եօթն էր. դա նրան զարմանք պատճառեց, ինչու այդ ժամանակին մայրը դեռ քնած է, հայրը գործի չի գնացել... մեւթը, երազի պէս մի բան էր դառնում նրա գլխում. կարծես մտաբերում էր գիշերուայ անցքը. «Ինքզն հայրիկ» դուրս թաւ յանկարծ նրա բերանից, աչքերը փակեց և ուղեց մտաբերել բոլորը, բոլորը ինչ կատարուեց այդ գիշեր:

Մայրը զարթնեց, երեսին խաչ հանեց. կուացաւ, դիտեց Շուշանիկին շնչառութիւնը և կարծելով թէ նա քնած է, զգուշութեամբ սկսեց սենեակի իրերը կարգի գցել:

Դուռը կամացուկ բացուեց, ոտքերի ծայրով ներս մտաւ Հեղինէն:

— Մայրիկ, Շուշանիկը քնած է:

— Ոչ, ես այնպէս միտք եմ անում, ուրախացած պատխանեց մայրը. նրա տանջուած դէմքի վրայ երևում էր յուսահատութիւն և երկիւղ. նա այդ մի գիշերուայ մէջ կրել էր անասելի վիշտ ու տանջանք:

— Հայրիկիդ խօսեցիք, ինչ է ասում:

— Հայրիկս ասում է, թող Շուշանիկը ուսումնարան գնայ:

— Ուղիղ, ուրախացած բացադանչեց Հեղինէն մօրը:

— Շուշանիկս ճիշտ է ասում, հայրը համաձայն է:

— Ուրեմն վաղը Շուշանիկը ուսումնարան է գնում: Այստեղ մեզ մօտիկ ուսումնարան կայ, կը խնդրեմ որ ընդունեն:

— Հայրիկս ասաց, ասաց, թող Շուշանիկն էլ ուսումնարան գնայ, մինակ ես, ասաց, տեղը չգիտեմ, ասաց, ես Հեղինէի համար մի զոյգ կօշիկ կը կարեմ, թող տանի. ես այնպէս հի-

ւանդ էի, երբ հայրիկս ասաց, լաւացայ. բայց գիտեմ, ինձ չեն ընդունի:

— Ի՞նչու.

— Նրա համար որ... ես ուսումնարանի հագուստ չունիմ. ես գիտեմ. բոլորին էլ ճանաչում եմ. այսպիսի հագուստով ոչ ոք ուսումնարան չի գնում. խեղճ մայրիկս Ռոտեղից կառնի:

— Այս կապոցը տեսնո՞ւմ ես, ի՞նչ կը լինի այստեղ:

— Չգիտեմ:

— Ապա առ, բաց:

Շուշանիկը արագ բացեց կապոցը և յանկարծ կանգ առաւ.

— Ի՞նչ ես զարմանում, փոքր բըռջս հագուստն է, քեզ համար եմ բերել. ա՛յ, տեսա՞ր, հագուստ էլ ունիս:

— Մայրիկ, տես, ասում է ինձ համար է բերել այս հագուստը. ես պիտի հագնեմ. իսկ ձեր հայրիկը չի՞ բարկանալ, այնպէս չի... Ի՞նչ լաւն է ձեր հայրիկը. բայց իմ հայրիկն էլ լաւն է. նա փող չունի, կօշկակար է, ասաց, ինձ թողնում է, որ ուսումնարան գնամ: Ես լսում էի երբ մօրս հետ խօսում էր. նա լաց եղաւ. նա ինձ համբուրեց, այնպէս սիրում է ինձ, ձեռքըս բռնեց, ասաց, ի՞նչ տաք է. ձեռքերս էլ համբուրեց. ասաց, գնամ, բօխիկ կանչեմ. մայրիկս չէր թողնում. բայց նա գնաց. խեղճ հայրիկ, գնաց բօխիկ բերեց. մի մեծ մարդ... Ես նրանից վախում էի. նա չգիտեմ ինչու հօրս վրայ բարկացաւ, բղաւեց: Երբ բօխիկը գնաց, մայրիկս շատ լաց եղաւ, հայրիկս էլ լաց եղաւ. իմ լացն էլ եկաւ, յետոյ... քնեցի... — Մայրիկ, ախր հայրիկս չգիտի, որ ես ուսումնարանի հագուստ ունիմ. որքան կուրախանայ: Ձեր հայրիկը գիտէ, որ ինձ էք տալիս, հօ չի՞ բարկանալ:

— Մենք պատմեցինք նրան. նա քեզ շատ սիրեց. ասաց ուսումնարանի վարձն էլ կը տամ. գրքերի փողն էլ, ուսումնարանի հագուստն էլ, այնպէս որ դու ոչ մի բանի հոգ չես տանի:

— Ուսումնարանին փող են տալիս, ախ ես այդ չգիտէի, գլուխս այնպէս ցաւում է... եթէ մեռնեմ, այն ժամանակ ոչի՞նչ, ոչի՞նչ էլ հարկաւոր չի... Ա՛խ ինչ վատ եմ...

Հեղինէին կանչեց տարաւ իրանց սպասուհին մօր հրամանով. վախենում էին վարակուելուց, թէն բօխիկը ասել էր, «Թոքերի բորբոքում է»:

Շուշանիկը մնաց մենակ. Խոհանոցում մայրը աշխատում է, կրակ է անում: Գոլիկը լցրել է քուրան, փչում է, ուզում է, կրակը աւելի բորբոքի. նրա մոայլ աչքերից մէկ-մէկ կաթում

են արցունքի կաթիլներ, ընկնում են թէժ կրակի վրայ թշուառ կորչում: Ինքը կօշկակարը կուչ է եկել, աւելի է կռացել, մկանունքները դուրս են ցցուել, աչքերը խորացել, փոս ընկել, յօնքերը եկել ծածկել են նրանց. նա ջղաձգական ցնցումներով այս անկիւնից այն անկիւնը ընկնում, կարծես մի բան է որոնում. մեծ աշխատանքի մէջ է: Տաւարի փափուկ լղար միս է գնել. այդպէս է բժիշկը հրամայել «երկու ֆունտ միս, ութ բաժակ ջուր, այնքան եփել, որ երկու բաժակ մնայ»: Ահա կրակի վրայ միսը եփում է, նա մի անգամ չափել է, դեռ 4 բաժակ ջուր կայ, դեռ շատ պիտի եռայ: «Ահ, ի՞նչ ուշ է այդ ջուրը քաշում, երբ պիտի երկու բաժակ մնայ» մտածում է կօշկակարը շուտ-շուտ նայելով կաթսային: «Մասջուր, մասջուր, միայն մասջուր պիտի տալ, ի՞նչ գիտէ ի՞նչ էք տուել. ձեր աղջիկը չի ապրել, նրա դրութիւնը անյուսալի է, երբ դանակը ոսկորին է հասնում նոր էք գալի ինձ մօտ» բղաւել է նրանց վրայ բժիշկը ու կրակ է գցել ծնողների սիրտը: Այժմ նրանք, բուլիօնի շուրջը պտտւում են, կարծես դա պէտք է իրանց աղջկանը ազատէ, կարծես այդ փրկարար հեղուկից է կախուած նրա կեանքը: Նրանք երբեմն իրար ետեկից դողդողալով, մտնում են աղջկայ մօտ. ապա նորից խոհանոց, նորից ածուխ են աւելացնում ու բորբոքում կրակը:

Այդ միջոցին Շուշանիկը նորից բացեց կապոցը, նայեց հագուստին, կոճակներին, գրպանին. ապա գոգնոցն ու ունոցը գննեց, ցանկացաւ մի վայրկեան իրան երևակայել այդ հագուստի մէջ. գիրքը թեւ տակ, ուսումնարան գնալիս. բայց դա նրան չյաջողուեց, միտքը պղտորւում էր. գլուխը լի էր այլանդակ պատկերներով, ահույի, տխրւոյ Մեծ դժուարութեամբ նստեց, ապա սկսեց հագնուել նոր զգեստը: Երբ ունոցը գցեց ուսերին, կարծես նա իրան լաւ զգաց, գոգնոցն էլ կապեց և զգուշութեամբ իջաւ ցած. մի ձեռքով յենուեց պատին, միւս ձեռքով գրքերը առաւ թեւ տակ, ապա պատէ պատ բռնելով հասաւ դռներին, դուռը բաց արաւ ու անցաւ դուրս: Նրա ոտքերը ծալւում էին, գլուխը պտտւում էր, բայց ուրախ էր, անչափ ուրախ. նա նայում էր իրան, գրքերին, և թւում էր, որ անառն ուսումնարան է գնում... Մի քանի քայլ էլ առաւ. անառն խոհանոցը, նա իր ամբողջ ոյժերը հաւաքեց, ուզում էր դուռը բաց անել. գոչեց. «Հայրիկ ջան, տես ես ուսումնարան եմ գնում»: Բայց դեռ շէմքին չհասած, աչքերը մթնեցին, երերաց, տառաւնուեց ու վայր ընկաւ...

Ծնողները լեղապատառ դուրս վազեցին, բայց իրանց աչքերին չէին ուզում հաւատալ. գրքերը ամուր բռնած՝ անշնչա-

ցած ընկած էր իրանց աղջիկը: Նրանք ճչացին, պողացին. նրանց ձայնը երկինք հասաւ. տները դողացին, հարեանները ցնցուցին, ամբողջ բակը հաւաքուեց, բայց վշտից խելագար ծնողներին չկարողացան մխիթարել: Շուշանիկի անմեղ, հրեշտակային հոգին երկնքումն էր, իսկ նրա փոքրիկ ու վտիտ մարմինը թաղեցին ուսումնարանի հագուստով գրքերը թէի տակ...

Շուշանիկին ուսումնարան տարան, այն մեծ ուսումնարանը, որի դռները բաց են ամենքի համար, հարուստ թէ աղքատ, կոշկակար թէ վաճառական:

Մ. Պետրոսեան

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳԻՇԵՐՆԵՐԸ

Գիշեր է: Եգիպտական գիշերները հրաշալի են: Ցերեկուան խաշող տօթը, թմրեցնող խորշակը, ամենաթարմ գիշերային սիւզով կը մոռցուի: Եգիպտական բուն կեանքը գիշերայինն է. ցերեկուան յոգնեցուցիչ կեանքի եռ ու զեռը՝ ելեքտրական լոյսերու ըմբռնումներով ցերեկ դարձած՝ գիշերը կը վերակենդանացնէ: Այնտեղ, բացօթեայ սրճարանները, զբօսավայրերը, ծովեզերքը, Նեղոսի հրաշալի ափերն ի վար երկնցող պարտէզները, լիքն են բազմութեամբ: Այնտեղ են համարեա աշխարհի բոլոր անկիւններէն համախմբուած բոլոր ազգերու ներկայացուցիչները. ամենքը կապրին ազատ կենցաղով, եգիպտական կլիմային տակ ապրողները չեն զգար թէ որու ձեռքին տակ կ'ապրին. ազատ քաղաքացիներ են ամենքը. պարտաճանաչ և ոչ յանցագործ մարդուն ոչ ոք կը հարցնէ թէ՛ դու ո՞վ ես, ինչո՞ւ այստեղ եկար. ոչ մի պատասխանատուութիւն: Բազմութիւնը կը զբօսնու այնտեղ համայնական, հասարակական ամեն բաղդաւորութեամբ. բացօթեայ նստած լորդին, փաշային, բէկին քովը կարող է նստել մի աննշան աղքատը և վայելել նոյնչափ, որչափ այդ մեծատունը. դասակարգային ազ-